ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 17

ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողի հարկի և գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի զ) կետի պահանջներով և հիմք ընդունելով այն փաստը, որ Աշոտ Ավագյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող 03-073-0117-0012 կադաստրային ծածկագիրը կրող 0.4504 հա վարելահողում հիմնել է պտղատու այգի /ծիրան, դեղձ/, 03-073-0145-0001 կադաստրային ծածկագիրը կրող 0.192 հա վարելահողում հիմնել է պտղատու այգի /դեղձ/, 03-073-0117-0013 կադաստրային ծածկագիրը կրող 0.4502 հա վարելահողում հիմնել է պտղատու այգի / ծիրան, դեղձ/, 03-073-0148-0001 կադաստրային ծածկագիրը կրող 0.177 հա վարելահողում հիմնել է պտղատու այգի /դեղձ/,

Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է՝

Աշոտ Ավագյանին տալ հողի հարկից ազատելու արտոնություն հինգ տարի ժամկետով /սկիզբ 2020թ ավարտ 2024թ/:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցվա տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագիծը՝ (այսուհետ՝ ՆԱԽԱԳԻԾ) համաձայն հավելվածի:
2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.
3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 15

ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-որ կետի պահանջով Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է.

Կատարել հոդվածային փոփոխություն ծախսային մասում հետևյալ կերպ
1.Պակասեցնել 900422113150 Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային /04.01.01.55/ Ընդհանուր բնույթի այլ ծառայություն 4239 հոդվածից 200000 /երկու հարյուր հազար/ դրամ
Ճշտված պլան սահմանել 124920 դրամ:
2.Պակասեցնել 900422113184 Հանրակրթական ուսուցում /09.02.02.51/ 4637 հոդվածից 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ
Ճշտված պլան սահմանել 0 դրամ:
3.Պակասեցնել 900422113135 Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին /10.07.01.55/ 4819 հոդվածից 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ
Ճշտված պլան սահմանել 50000 դրամ:
4.Պակասեցնել 900422113036 Կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 հոդվածից 66000 /վաթսունվեց հազար/ դրամ
Ճշտված պլան սահմանել 634000 դրամ:
5.Պակասեցնել 900422113093 Համայնքների պահուստ /11.01.02..51/ Պահուստային միջոցներ 4891 հոդվածից 1384000 մեկ միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար/ դրամ
Ճշտված պլան սահմանել 335.8 դրամ /երեք հարյուր երեսունհինգ դրամ ութ լումա/ դրամ:
6.Ավելացնել 900422113192 ոռոման ցանցերի կառուցում և վերանորոգում գործ դասակարգման /04.02.04.51 / Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657 հոդվածին 1850000 /մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ դրամ
Ճշտված պլան սահմանել 3560000 դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 14

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է.

Հաստատել ավագանու թիվ 6 նիստի օրակարգը
1.Օրակարգը հաստատելու մասին:
2.Հոդվածային փոփոխություն կատարելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցվա տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագիծը հաստատելու մասին
4.Հողի հարկից ազատելու արտոնություն տրամադրելու մասին

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ